

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Աստուծո ողորմությամբ, Նոր տարվո արշալույսը վերստին մեզ բոլորիս բերում է մեծ ավետիսը հրաշալի Ծննդյան մեր Տիրոջ ու Փրկչի Հիսուսի Քրիստոսի:

Մեր հուսացյալ հոգիները մի անգամ ևս լուսավորվում են ու ոգեշընչվում, ու փառավորում սուրբ և անմահ անունը Աստուծո, որ Իր Միածին Որդին առաքեց երկիր, ի փրկություն մարդկային ցեղի:

Այս սուրբ պահին, Մենք ծնկաչոք աղոթում ենք Միածնաէջ Մայր տաճարի կամարների տակ, որ Սուրբ Ծննդյան պատգամները «խաղաղութեան և ի մարդիկ հաճութեան» առատապես բաշխվեն աշխարհին համայն, ու առաջնորդող լույս դառնան մեր օրերի մարդկանց ու ազգություններին:

Ավելի լույս, ավելի փոխադարձ հաճություն և եղբայրական սեր ու խաղաղություն նաև մեր սուրբ Եկեղեցվո ու ժողովուրդի կյանքի ճանապարհին:

Սուրբ Ծննդյան ավետիսով հղում ենք Մեր սիրո ողջույնը և ամենաբարի մաղթանքները Ձեզ և Մեր օրհնությունները՝ համայն հայ հավատացյալ ժողովրդյան:

«Եւ ինքն Տէր խաղաղութեան, տացէ ձեզ խաղաղութիւն յամենայն ժամ, յամենայն իրս» (Բ Թեսաղ. Գ 16): Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար: